ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ մեծանուն բարերար Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի h.31 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Հայրապետյանը ծնվել է 1949 թվականի մարտի 12-ին Լեռնային Ղարաբաղի Վանք գյուղում:

Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: Որպես լրագրող աշխատել է «Կոմսոմոլսկայա պրավդա», «Սոբեսեդնիկ» թերթերում, «Օգոնյոկ» ամսագրում: Եղել է «Սոբեսեդնիկ» հրատարակչական տան հիմնադիր: Զբաղվել է նավթի վաճառքի հետ կապված բիզնեսով:

Ակտիվ մասնակցություն է ունեցել ԼՂՀ ստեղծման գործում և համարվում է դրա գլխավոր հովանավորներից մեկը: Համարվել է ամենախոշոր ներդրողը Լեռնային Ղարաբաղի ժամանակակից պատմության մեջ: Նրա ծրագրերն իրագործվել են Ստեփանակերտում, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում:

2000-2002թթ. գործարարի միջոցներով վերակառուցվել է հայկական հռչակավոր Գանձասարի վանական համալիրը (13-րդ դար):

2007 թվականին Լևոն Հայրապետյանը ֆինանսավորել է 2,5 միլիոն 3մ տարողությամբ ջրամբարի կառուցումը Խաչեն գետի վրա:

2008 թվականի հոկտեմբերի 16-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտին մոտ՝ հինավուրց Շուշիում և պատմական Գանձասարում բարերարը կազմակերպել է նորապսակների համատեղ պսակադրություն: Այդ արարողությունը, 700 երիտասարդների մասնակցությամբ, իր տեսակով առաջինն էր ոչ միայն Արցախում, այլև ողջ Հայաստանում: Մեծ հարսանիքի օրը 200 զույգ պսակադրվել է Գանձասարի վանքում: Մի քանի ժամ անց ևս 500 զույգ պսակադրվել է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում:

Հայրենի Վանք գյուղում Լևոն Հայրապետյանը հիմնել է հյուրանոցային համալիրներ, բանկեր, հանդիսությունների սրահ, բարեկարգել է Արցախի կենդանաբանական և բուսաբանական այգիները, վերակառուցել է Արցախի բազմաթիվ միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ:

2011 թվականին Հայրապետյանը պարգևատրվել է Պատվո շքանշան պարգևով:

2014 թվականի հուլիսի 15-ին Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում Լևոն Հայրապետյանը ձերբակալվել է, ուր նա ժամանել է Մոնակոյից:

Լևոն Հայրապետյանը մահացել է 2017թ. հոկտեմբերի 18-ին:

Հայ մեծանուն բարերար Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.31 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Ալեքսան Բաբայանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ